ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 3567 — ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1883 — Ն. Տ. 2 ՅՈՒՆՎԱՐ 1884

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 Մէճիտ.
» » Գաւառաց » 12 »
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 5 1/2 »
» » Գաւառաց » 6 1/2 »
Եռամսեայ » Կ. Պոլսոյ » 3 »
Օտար թղթատարով ղրկուած 2 1/2 լիրա
Յանձնումն տողը մէկ անգամի համար 3 ղրշ.
երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար զեղչ տակաւորութիւն կը լինի

40 ՓԱՐԱՑ

ՀԱՆՐԱՊԱՀԱՆՈՒԹԻՒՆ

40 ՓԱՐԱՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆԴ

Դուրս գնացած լրագրաց ճանուցումներուն ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերարերեալ նամակ կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր—Ցնօրէնին պիտի ուղղուի Կ. Պոլիս Բիզա փաչա խօզուշը, Շարգ Զարչրսը Թիւ 37 Մասիսի գրասենեակը։

Ճանուցումներու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

Չգրաւուած նամակ, յօդուած, եւայլն եւ չեն տրուիր։

Կ. ՊՈԼԻՍ 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանը Վէզիրութեան և Միւշիրութեան ատիճան շնորհեց Հիճազի կուսակալ Ցերիգ Օսման փաշային։

Վանայ Կեդրոնական Նախորդ. խառավարիչ Շերբի էֆէնտի Էնճիւրիի նահանգին դատական քննիչ անուանուեցաւ։

Ղազի Ահմէտ Մուխթար փաշա, որ Վեհ. Սուլթանին կողմէ Իտալիոյ թագաւորին ընծայեալ Իմթիազի պատուանշանն Հռոմ տանելու պատուոն ունի, այսօր Պրինտիզիի շոգենաւով կը մեկնի մայրաքաղաքէս իւր ուղեկցաց հետ։

Մօնթէօր Օրիանթալ՝ Պուլղարական լրագրերէ առնլով կ'ըսէ թէ Արեւելեան Բումելիի կուսակալ Ալեքսի փաշայի հնգամեայ պաշտօնավարութիւնը լրանալու մօտ լինելով, Լիբանանու Նախորդ կառավարիչ Բիւսթէմ փաշա, որ Անգլիոյ և Ֆրանսայի կողմէ կը պաշտպանուի, Գարաթէոտորի փաշա և Ագրոյ էֆէնտի ընտրելի առաջարկուեր են եղեր Բ. Դրան կողմէ։

Ելմտական Նախարարութիւնը Բ. Դրան պաշտօնէից Օգոստոսի ամսականը տալու պատրաստութիւն կը տեսնէ։

Թէրճէմանի Հագիգաթ կը ծանուցանէ թէ Նիկոմիդիայէն դէպի Էնկիւրիի ներսերն երեք կանգուն անձրեւ տեղալով, բոլոր հաղորդակցութիւնք խափանուած են։ Թղթատարք ճանբան տեղ տեղ ձիւներուն տակ մնացեր են, բայց չորկայ գեղերու բնակչաց օգնութեամբ կրցեր են ազատիլ։

Ցունական Ավկի լրագիրը ղրոյց մը կը յիշէ, որ հաճոյական տպաւորութիւն մը յառաջ կը բերէ հասարակութեան մէջ։

«Երկուքնէ ի վեր, կ'ըսէ մեր ցոյն պաշտօնակիցը, զրոյց ելած էր թէ Նախարարաց խորհուրդը, կիրակի աւուր նստին մէջ, որոշեր է Ցունաց Պատրիարքարանը ղրկել Ցովակիմ Դ. Պատրիարքին պաշտօնէն հաստատող Կայսերական Պերատը, առանց որ և է փոփոխութեան։

«Զենք կրնար այս զրոյցին ստուգութիւնն երաշխաւորել, այլ բարեմաղթութիւններ կ'ընենք որ իրականութիւն գտնէ։

Կերիտի Մինոս լրագիրը կը կարծէ գիտնալ թէ Հանեայի Անգլիական հիւպատոս Պ. Սանտուիթ, Լորտ Տըֆրինի հրաւիրմամբ, մայրաքաղաքը պիտի գայ ի մօտոյ։ Կը կարծուի թէ Պ. Սանտուիթ տեղեկութիւններ տալու հրաւիրուած է Վագֆի ստացուածոց տասանորդական տրոց խնդրոյն վրայ, որ ինչպէս յայտնի է, Հանեայի ժողովրդեան գանգատներէն մին կը կազմէ։

Փարիզ հրատարակեալ «Լէզ Արշիվ Իսրայէլիթ» անուն թերթը՝ Վեհ. Սուլթանին մարդասիրական զգացմանց վրայ խօսելով, իրաւամբ դիտել կուտայ թէ Իսրայէլացիք Թուրքիոյ մէջ որ և է հալածման ենթակայ չեն բնաւ, մինչդեռ քաղաքակիրթ Եւրոպայի երկիրներու մէջ ամեն տեսակ չարիք և հարստահարութիւն կրեն։ Ցեռոյ խօսելով այն ունկնդրութեան վրայ, զոր Վեհ. Սուլթանը վերջին օրերս չընորհեց Հրէից Խախամապետին, երախտագիտութեամբ կը յիշատակէ այս առթիւ Վեհ. Սուլթանին արտասանած խօսքերն, որ բարեհաճեր է յայտարարել թէ իւր բաղձանքն է տեսնել իւր Հրեայ հպատակներն, որ իւր միւս հպատակաց պէս բարեկեցութիւն և երջանկութիւն վայելեն ընդ հովանեաւ Օսմ. տէրութեան։

Հանրային կրթութեան Նախորդ. Նախարար Միւնիֆ փաշա կառավարութեան նոր բացած վաճառականական դպրոցին մէջ ձրի դասախօսութիւն մ'ստանձներ է։

Վերջին օրերս տեղատոր հեռագրման անձրեւաց պատճառաւ, Զաթալճայի և երկաթուղոյ կայարանին միջեւ գտնուած դաշտն ամբողջ լճակի մը փոխուեր է գրեթէ։ Կամուրջ մը փլեր և մեծ խճուղին բոլորովին քանդուեր է։ Բազաքին և երկաթուղոյ կայարանին միջեւ երթեւեկութիւնը բոլորովին ընդհատուեր է։ Հեռագրական սիւները տապալեր են։ Բերայի լրագիրք կ'ըսեն թէ Հանրօգուտ շինութեանց Նախարարութիւնն երկրաչափ մը ղրկեր է ի Զաթալճա, պատահած վնասուց վրայ տեղեկագիր մը շինելու համար։

Սթամպուլ կը ծանուցանէ թէ երկար ժամանակէ ի վեր Ալպանիոյ մէջ ասպատակող Ալպանիայի աւազակապետ՝ առանց պայմանի՝ անձնատուր եղեր են տեղական իշխանութեանց։

Հելլենական Նախարարապետ Պ. Թրիքուբի անցեալ շաբթու երեսփոխանական ժողովոյ օրինաց ծրագիր մը ներկայեց, որ կ'առաջարկեր բոլորովին ջնջել Օսմ. սահմանագլխին վրայ դրուած մաքսն և թողուլ որ արջառք և Մակեդոնիոյ ուրիշ արտադրութիւնք առանց մաքսատուրքի մտնեն այն գաւառներն, որք վերջին Թուրքոյ-Ռուսական պատերազմէն յետոյ Ցունաստանի թողուած են։ Այս օրինաց անմիջական արդիւնքը պիտի լինի մսին գինն իջեցնել, ջնջելով կարգ մը ձեւակերպութիւններ, որք մեծ արգելք մ'եղած էին արջառաց ներմուծման։

Աւստրիական Լէյթթա անուն երկկայսր առաջատանաւ մը, որ հաքածուխ առած՝ Լիվրբուլէն Ֆիումի կ'երթար, Ափրիկեան Տըրիպոլոյ ծովեզրաց վրայ խորտակուեր է։ Մէջը գտնուող 11 մարդիկ խեղդուեր են։

Զրոյց կայ թէ ֆրանսական Մէսաժըրի ընկերութեան Աւա շոգենաւն Հնդկական ջուրերուն մէջ ընկղմեր է։

Կը հաստատուի այն զրոյցը թէ Մէսաժըրի ընկերութեան Նիէմէն շոգենաւն, որ մայրաքաղաքէս Մարսիլիա կ'երթար, Տրոյ հրուանդանին մօտ այնպիսի փոթորկի մը հանդիպեր է, որ դեկտ. 14ին խբրեր է Հելլենական Քարիսթոյ ծովածոցին մէջ։ Բուռն հովեր շոգենաւին առագաստները պատառ պատառ ընելով ծովը քշեր են և կոհակները մինչեւ մեքենային ու կաթսային մէջ մտնելով կրակը մարեր են, և շոգենաւն 3 մեթրոյէն աւելի ջուր առեր է։ Ցիշեալ ընկերութեան Կ. Պոլսոյ գործակատարը այս աղեսին լուրն առնելուն պէս՝ Էրիտան և Տոնայի շոգենաւերն օգնութեան ղրկեց։ Հելլենական Պուլպուլինա մարտանաւն, Ֆրանսականվենիւս և Տիւկէ-Թրուին մարտանաւերն և Ռուսական Սթրոկոֆ մարտանաւն ալ Պիրէոնէն օգնութեան գնացեր են։ Դեկտ. 16ի իրիկունը, Տոնայի շոգենաւը վրան գտեալ Նիէմէն շոգենաւուն ուղեւորներն ու թղթատարական պայուսակներն առնլով Պիրէոն տարեր է։ Օգնութեան հասնող շոգենաւը հետեւեալ օրն սկսեր են Նիէմէն շոգենաւն ազատելու աշխատիլ և յաջողեր են։ Էրիտան շոգենաւն իւր ետեւէն կապելով զնիէմէն, մինչեւ Պիրէոն տարեր է։ Հելլենական լրագիրք կ'ըսեն թէ մեծապէս վնասուած է խրեալ շոգենաւին բեռը, որ մէկ միլիոն ֆրանք արժողութիւն ունի եղեր։

Ինչպէս ծանուցած էինք, Ցունաց Պատրիարքարանի Սինոդին և խառն ժողովին կողմէ պատգամաւորութիւն մը, դատական գործոց նախարար Ասիմ փաշայի հրաւիրմամբ, շաբաթ օրը նախարարին ապարանը գնաց, ուր կը գտնուէին նաեւ հանրօգուտ շինութեանց նախարար Հասան Ֆէհմի փաշա, դատական գործոց նախարարի խորհրդական Վահան էֆէնտի և կրօնական գործոց վերատեսուչ Զիվէր պէյ։ Ասիմ փաշա՝ յանուն կայսերական կառավարութեան՝ ղարմանք յայտնեց թէ Ցունաց Պատրիարքարանն առանձնաշնորհութեանց խնդիրը մեծապէս չափազանցած էր և այնպիսի հանգամանք մը տուած կը թուի որ ըստ կարծեաց Բ. Դրան, չէր կրնար ունենալ։ Նախարարն յարեց թէ Մեսրապոլիտներու Պէրաթներուն և Ցունաց Պատրիարքարանի ուրիշ քանի մ'իրաւանց մէջ բարեփոխումներ ներմուծելով, կայսերական կառավարութիւնը բնաւ նպատակ չէ ունեցած ջնջել Օրթոտոքս քրիստոնէից եկեղեցական առանձնաշնորհումները, այլ միայն տէրութեան դատական դրութիւնը՝ դատարանաց վերակազմութեան վերաբերեալ նոր օրինաց հետ ներդաշնակ վիճակի մը մէջ դնել։ Նախարարն իւր խօսքը վերջացնելով յայտարարեց թէ կայսերական կառավարութիւնն՝ այս խնդրոյն ստացած անակնկալ երեւոյթին վրայ ցաւելով, և ինչպէս միշտ, նոյնպէս և այժմ իւր քրիստոնեայ հպատակաց օրինաւոր և արդար պահանջումները գոհացնելու փափաքող լինելով, կը հրաւիրէ Ցունաց Պատրիարքարանն, որպէս զի վերստին Բ. Դրան ներկայէ այն պատճառներ, որոց համար անհնարին կը լինի իրեն ընդունել առաջարկեալ փոփոխութիւններն։

Յայնժամ պատգամաւորութեան անդամք անգամ մ'եւս բացատրեցին այն պատճառներ, որք արդէն Պատրիարքարանի ղանգան թագրիներուն մէջ բացատրուած էին մանրամասնօրէն, և յարեցին թէ՝ եթէ առանձնաշնորհութեանց խնդիրը չունի իրեն վերագրուած կարեւորութիւնը, յուսալի է որ կայսերական կառավարութիւնը չպիտի ուզէ պնդել այնպիսի որոշման մը վրայ, որոյ արդիւնքը բաղդատաբար յոյժ սեղմեալ օգտակարութիւն մը միայն պիտի ունենայ։ Ընդհակառակն, եթէ առաջադրեալ փոփոխութիւնք յոյժ կարեւոր են, Բ. Դուռը պիտի հաճի ճանչել թէ Ցունաց Պատրիարքարանն իւր կարծեաց վրայ պնդելու իրաւունք ունի։

Պատգամաւորութիւնն, անդրադտնուող նախարարաց քանի մը դիտողութիւններէն յետոյ, մեկնեցաւ ապարանէն, հաւաստիք ստանալով թէ իւր յարգական դիտողութիւնները նախարարաց խորհրդոյ պիտի ներկայացուէին։ Ս. Սինոդն և Աղգ. խառն ժողովն այսօր Ֆէնէրի Պատրիարքարանը գումարուելով, Պատգամաւորութեան տեղեկագիրը պիտի լսեն։

Արդէն ծանուցինք թէ Բ. Դուռն՝ օտար տէրութեանց քով գտնուող Օսմ. դեսպանաց ցիշատակագիր մը ղրկած է կայսերական կառավարութեան եւ Ցունաց Պատրիարքարանի միջև վէճի նիւթ եղած առանձնաշնորհութեանց խնդրոյն իրական բնութիւնը բացատրելու համար։

«Ցար տիւ Պոսֆոր իւր երէկի թուով այս կարևոր պաշտօնական մէկ համառօտ բովանդակութիւնն հրատարակած լսելով՝ կը թարգմանենք։

«Կայսերական կառավարութիւնը նախ կ'սկսի պատճառաբանել եկեղեցական առանձնաշնորհութեանց մէջ իւր առաջադրած փոփոխութիւնները ներմուծելու հարկը, յիշելով այն անպատեհութեան որ էրաց նախնի էֆէնտի պահպանումէն յառաջ կուգայ, որ ըստ Բ. Դրան կարծեաց, Պեռոռնեան մէջ Պեռոռիէն մը կը նշանակէ։ Ցիշատակագիրն յետոյ կը բացատրէ թէ եկեղեցական առանձնաշնորհութիւնք քանիցս և այլ և այլ ժամանակներ փոփոխութիւնք կրած են արդէն, առանց Պատրիարքարանի կողմէ որ և է դանգատ լինելու։ Այսպէս, հին ժամանակներն և Թանզիմաթի հաստատումէն, եկեղեցականք, հասարակ յանցանաց համար, Շերիի դատարանաց առջև կը դատուէին։ Անոնք կը դատուէին նաև Գալաթիոյ առջև և վերջէն հաստատուած օրէնքի մը ղօրութեամբ՝ Շեյխ-իւլ-իսլամին առջև։ Թանզիմաթին հաստատումէն յետոյ, արմատական փոփոխութիւն մը մտցուեցաւ դատարանաց իրաւասութեան մէջ, և ըստ այնմ եկեղեցականք Արդարութեան Բարձր Ատենին (Ահեմմէ Ատլիէ) առջև դատուեցան, որ այսօր գոյութիւն չունի։ Ցիշատակագիրը կը հաստատէ թէ այս փոփոխութիւնք միշտ կայսերական կառավարութեան յատուկ կամքն ներմուծուած են, մինչ իսկ Թանզիմաթի հրատարակումէն շատ ժամանակ յետոյ, և թէ յայնժամ Պատրիարքարանը չէ բողոքած։ Գալով կտակաց խնդրոյն, Ցիշատակագիրը կ'ըսէ թէ քրիստոնէից միջեւ ժառանգական խնդիրները մինչեւ ցարդ Շերէի տրամադրութեանց համեմատ կը կարգադրուէին, թէպէտ Ցունաց Պատրիարքարանի միջոցաւ։ Ուստի, ոչինչ կ'արդարացնէ Պատրիարքարանի իրաւասութիւնն այս խնդրոյ մէջ, քանի որ անոնց կարգադրութիւնն Օսմ. կրօնական օրէնքներէն նախատեսեալ է և Պատրիարքարանը պարզ միջնորդի դեր միայն կը կատարէ։

«Ցիշատակագիրը կ'եզրակացնէ թէ Բ. Դուռը չկրնար իւր մտադրած փոփոխութիւններէն հրաժարիլ, վասն զի յայնժամ Պեռոռիէն մը Դեռ Պեռոռիէն կը նշանակէր, իրաց վիճակ մը, որ անհաշտելի է Օսմ. օրինաց բարւոք կերառութեան հետ։»

ՀԵՌԱԳՐԵՐ

—o—

Պերլին 1 Ցունվար.

Բեղրսպուրկէն եկած տեղեկութիւնք կը հաստատեն թէ վարչական մէջ ոչինչականակն նոր տպարաններ գրուելու են, եւ թէ կարեւոր ձերբակալութիւններ եղեր են ոչ միայն այս քաղաքին, այլ եւ Բեղրսպուրկի մէջ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՒԷՐ

ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՍ

Ազգային ժողովոյ ժէ. նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ուրբաթ, 23 դեկտ. ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցի Ղալաթիոյ։

Ատենը պիտի բացուի ժամ 7ին։

Հրաւիրեալ են Ազգ. Երեսփոխանք իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ։

20 դեկտ. 1883 Մնամ աղօթարար
Ի դիմաց Ս. Պատրիարք Հօր
Փոխանորդ Նորին

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Տեղեկագիր Համարակալութեան դիւանի ի վերայ Ազգ. Կեդր. Ելմտացուցին.

Բ. Տեղեկագիր Վարչութեան յաղագս ազգային դասագրեանց տպագրութեան (ի պատասխանի Ն. Էֆ. Թիւլպէնտճեանի հարցման.

Գ. Տեղեկագիր Վարչութեան, Մայր Աթոռոյ մէջ տեղի ունեցած անցեալ մասին (ի պատասխանի Ն. Էֆ. Թիւլպէնտճեանի հարցման։

Ատենադպիր
Յ. Գ-ուրէն

[illegible] նախապատրաստութիւնները կատարելու պաշտօն ունեցող ցանձնախումբն այսօր իւր առաջին նիստը պիտի ընէ Ղալաթիոյ խորհրդարանը, ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր։

Մուչէն առնուած տեղեկութիւնք յոյժ տխուր են և ազգայնոց ցաւալի կացութիւնը կը նկարագրեն։ Առաջնորդի բացակայութեան պատճառաւ երբեմն տեղի ունեցած անհաճոյ դէպքեր հիմա աւելի յաճախ կրկնուիլ սկսած են։ Հայաստանեայց եկեղեցւոյ հակառակ ամուսնութիւնը տեղի ունեցեր են եղեր, որոց նկատմամբ դեռ մանրամասն տեղեկութիւնք կը պակսին։

Ի հարկէ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն և Ազգային վարչական մարմինք իմաստութեամբ պիտի չարժին և գործեն Մուչի ազգայինները սոյն դժբաղդ կացութենէն ազատելու համար։

ՀԱՆԴԷՍ ԲԱՑՄԱՆ ՆՈՐ ԹԱՏՐՈՆԻՆ ԲԵՐԱՑԻ

Յառաջիկայ դեկտ. 29 ի դիշերն, Բերայի Նոր Թատրոնին բացումը պիտի կատարուի շքեղ Պարահանդէսով մ'ի նպաստ Թաղին Ազգային վարժարանաց։ Եթէ Պարահանդէսին հովանաւորութիւնն ստանձնող Հանրային Կրթութեան Նախարար Վեհ. Մուսթաֆա փաշայի ներկայութիւնն և երեք թաղային աղքատիկ վարժարանաց օժանդակութիւնը մեծ հրապոյրներ են շատերու համար, ոչ նուազ մեծ հրապոյր մը պիտի լինի բացումն այնպիսի շէնքի մը որ Բերայի գլխաւոր փողոցին ճարտարապետական գոհարը կը նկատուի իրաւամբ։ Ազգաբարի աւերակներուն վրայ բարձրացող այս գեղեցիկ հիմնարկութեան ճաշակաւոր համաձայն մարմարիոնէ ձեւացած է, դորիացի և յունական խառն ճարտարապետութեամբ. նա ծածկուած է հին աբոյրի նմանողութեամբ զարդերով, որոնք նոր-յունական ոճով շինուած են։ Դռնիացի սիւներու յեցած երեք կամարներ կը կազմեն ստորին յարկն, իրենց միջեւ ունենալով նաեւ վայելուչ կամարակներ. երաժշտութեան խորհրդանշանները պարունակող չորս զարդախումբեր, նոր-յունական ճաշակով կերտուած, կը շքաւորեն ճակատը։ Վերին յարկի սիւներն յոնիական են և կ'անջատեն պատուհաններն, որոց երկուքը պատշգամաւոր. նոյն յարկին մէջ չորս դարակներ կը պատրաստարեն իտալիա շինուած չորս այլաբանական արձաններ։ Թատրոնին կտուրն ալ նոր-յունական ճարտարապետութեան կը համապատասխանէ։ Մարմարեայ սանդուղէ մը հարկ է անցնիլ, թափանցելու համար շէնքին ներքնակողմն, որ ներու ներքնակողմներէն աւելի ընդարձակ է. երեք յարկ օթեակներ, թուով յիսուն և ութ հատ ընդ ամենն, կը շրջապատեն սրահը, որ իտալական վերածնութեան ոճով զարդարուած է և ճերմակ և ոսկեգոյն երանգներով ներկուած։ Ջեղուցին վրայ Գերմանացի արուեստագէտ մը ճարտարութեամբ նկարած է Ապոլոնի յաղթանակը։ Թատերաբեմն ունի ընդարձակութիւն մը որ բաւական է մինչեւ իսկ նուագերգութեանց համար։ Զանազան դահլիճներէ զատ, շէնքը կը պարունակէ քառասուն ստորերկրեայ սենեակներ, ընտանեկան ընթրիքներու յատկացեալ։ Մէկ խօսքով, ամեն բան նոր է և ճոխ, և հանրային շէնքի մը համար հարկ եղած ապահովութեան և հանգստեան պայմանները նախատեսուած են լիովին։ Ահա համառօտիւ այն շէնքն որ Բերայի թաղին համար հասոյթի առատ աղբիւր մը լինելու սահմանուած է։ և որ կրցաւ կանգնուիլ շնորհիւ այն փոխատուութեան՝ զոր ի սէր տեղական մանկուոյն դաստիարակութեանն յօժարեցան ընել մեծ մասամբ Մեծ. Էսաեան եղբարք և մասամբ Մեծ. Կիւմիւշկերտան եղբարք և Ցակոբեան Միքայել էֆէնտի։ Ոչ նուազ գովելի են Շինութեան Մասնախմբի անդամոց անձնուէր ճիգերը, մանաւանդ Թաղական խորհրդոյ արժանընտիր նախագահ Վսեմ. Նուրեան էֆէնտիի անձանձիր և անյողդողդ աշխատութիւնն, որ ամեն դժուարութեանց յաղթելով ի կատար հանեց այսպիսի հոյակապ հիմնարկութիւն մը։ Իսկ շէնքին արուեստագիտական արժէքը կը վերաբերի ամբողջապէս իւր հեղինակին, այն է հայազգի երիտասարդ ճարտարապետ Մեծ. Ազնաւոր Ցովսէփ էֆ.ին, որ Հռոմի Թագաւորական Ճեմարանի պսակաւոր աշակերտն եղած և 1877ին ստացած է անդ վաստակի չքադրամն, միակ վարձատրութիւն որ Հռոմի մէջ ճարտարապետութեան ուսումն աւարտող վկայականաւորացնչանաւորագունին կը շնորհուի։ Այս տաղանդաւոր ճարտարապետն, որ Թէփէ-Պաշիի Թատրոնին և Պաղատ-Ալմանի վաճառատան շինութեամբ իւր արուեստին առաջին փորձերը տուած էր արդէն, այս նոր հրաշակերտով կ'ապացուցանէ թէ ճշմարիտ արուեստագէտ մ'է։ Ուրեմն ամեն ղգայուն Հայ պարտաւոր է իւր ներկայութեամբ պատուել Նոր Թատրոնին բացման հանդէսն, համոզուած՝ թէ կ'արժէ ոսկի մը զոհել այսքան շլացուցիչ ազգային յարկ մը սղջուներու համար իսկ։

ՄԱԿՈՒԱՍ

ի վաղ դիմաց ի ամենայն ազգաց ի ամենայն լեզուաց ի ամենայն ազգաց ի ամենայն լեզուաց ի ամենայն ազգաց ի ամենայն լեզու

(43)

ՎՈՎՈՒՈ ԴՈ-ԺԱԳԺ

ՅՏԳԵԺՈՒՆ ԿԵՎ ԴԵՑՍՆՍՓ ՎԴՎՈՅՍՆ

17.

ԴԱՇՆԱՆ ԴՈՌՈ

ԿԱՎԱՇԳԴՈՏԴՅ

ԹՍԼՈՒՈ ԺՍԳԺՇ

(Մեկնարկ 1 օրվա ապրիլի)

Սարքեցեք Ս. Կիրակոսյանի Խանութ

Ամենաէժան գները

Ամենաարագ ապրանքները

Ամենաշատ տեսակներ

Ամենաշատ գեղեցիկ ապրանքներ

Ամենաշատ գեղեցիկ գներ

Ամենաշատ գեղեցիկ գներ

Ամենաշատ գեղեցիկ գ

ՍՈՍ

ՀՈՖԵՆԻՆԳԵՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիլեթիոլ եւ Ամերիկեան գլխաւոր գրասենեակ

ԳԼԽԱՒՈՐ ՆԿԱՐԱՏՈՒՄ

Ամերիկայի մեր գործակալները

Ամերիկայի մեր գործակալները

Ամերիկայի մեր գործակալները